



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

N 215

21.08 2018թ.

ք.Արվաշատ

ՆԱԻՐԱ ԱԼԲԵՐՏԻ ՄԻՆԻԹԱՐՅԱՆԻՆ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա. ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության» կարգի 34-րդ կետով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ քաղաքի Պարույր Սևակի անվան N2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2018 թվականի օգոստոսի 15-ի որոշումը.

2018 թվականի օգոստոսի 21-ից Նաիրա Ալբերտի Մինիթարյանին նշանակել «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ քաղաքի Պարույր Սևակի անվան N2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և կնքել աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով:

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ.ՍԱՐԳՍՅԱՆ